

Τίμαιος) երկի *Γεմիուրգոս* (յուն.՝ Dēmiourgós) աստուածը, որ «ստեղծագործ արարիչ աստուած» մըն էր:

Այն պատկերացումը, որ աշխարհի ստեղծուած է՝ ո՛չ թէ գերագոյն աստուծոյ կողմէ, այլ երկրորդական նկատուող աստուածութեան մը կողմէ, հետագային շատ կարեւոր դեր պիտի ունենար, որովհետեւ այդպիսով հնարաւորութիւն պիտի տրուէր, որ գերագոյն աստուածը բոլորովին գերծ մնար աշխարհի վրայ չարի ու չարիքի գոյութեան ծանր պատասխանատուութենէն ու այդ հարցը փոխադրուէր երկրորդ աստուծոյ ծիրէն ներս:

Փիլիսոփայական այս նոր ուղղութեան մէջ շատ յայտնի անուն մըն է Նոր-պիւթագորական **Ապոլլոնիոս Թիանացին** (յուն.՝ Apollōnios ó Tyaneús, 40 – 120 թ.), որ Նաեւ որպէս «հրաշագործ» լայն ճանաչում ունէր: Հետագային պիտի հաստատենք, որ աստուածաբան փիլիսոփայ **Փիլոն Ալեքսանդրացին** եւս (յուն.՝ Philōn, մօտ. 20 մ.թ.ա. – 50 թ.) մեծապէս ազդուած է փիլիսոփայական Նոր-Պիւթագորական ուղղութենէն:

Մ.թ.ա. առաջին դարու երկրորդ կիսուն, կը զարգանար փիլիսոփայական Նոր շարժում մը, որ պլատոնական հիմք ունէր: Հոս, գլխաւորաբար նկատի կ'առնուէր **Պլատոնի «Տիմաիոս»** (յուն.՝ „Tímaios“) երկը, ուր առասպելական ծեւով կը ներկայացուի *Γεմիուրգոս* (յուն.՝ Dēmiourgós) աստուածը, որ «ստեղծագործ արարիչ աստուած» մըն է: Պլատոնականութեան կողքին, այս նոր շարժումը ազդեցութիւնը կը կրէր Նաեւ արիստոտելեան, ստոյիկեան եւ Նոր-պիւթագորական գաղափարներուն: Փիլիսոփայական այս նոր շարժումը, որ կոչուեցաւ՝ *Միջին-Պլատոնականութիւն*, արդէն սկսած էր իր մէջ համադրել փիլիսոփայական եւ կրօնական զանազան միտքերը, զորս հետագային պիտի շարունակուէր փիլիսոփայական Նոր-Պլատոնականութիւն^[8-41] (Neo-Platonism) կոչուած ուղղութեան կողմէ:

Միջին-Պլատոնականութեան գլխաւոր դեմքերը կը նկատուին.- **Եւդորոս Ալեքսանդրացին** (յուն.՝ Eúddōros, մ.թ.ա. Ա. դար), որ շարժումի հաւանական հիմնադիրն էր եւ մ.թ. Ա. եւ Բ. դարերուն՝ կենսագիր եւ Յունաստանի Դելփի հեթանոսական տաճարի քրմապետ՝ **Պլուտարքոս** (յուն.՝ Plútarchos), ինչպէս Նաեւ **Ալբինոս** (յուն.՝ Albinos), **Ատտիկոս** (յուն.՝ Attikos), գրող փաստաբան **Ապուլէոս** (Apuleius) եւ Քրիստոնէութեան դէմ պայքարող՝ **Կելսոս** (յուն.՝ Kélsos), որու համաձայն անդրանցական աստուածը, աշխարհ գալով, երբեք մարդոց աստիճանին պիտի չիջնէր եւ ինքզինք նուաստացնէր ապա աստուած չէր կրնար նիւթը (Materia) ստեղծել, քանի որ նիւթը չարութեան հիմքն է կամ ինքնին «չար»ը: Այս եւ նմանօրինակ այլեւայլ գաղափարներ իրենց շարունակութիւնը ունեցան, Նոր-պլատոնական **Պորփիրիոսի**²³ (յուն.՝ Porphyrios) եւ այլոց պարագային:

23 **Պորփիրիոս** (յուն.՝ Porphyrios, 233 – 305 թ.).-

Յոյն փիլիսոփան, Նոր-Պլատոնականութեան հիմնադիր Պլոտինոսի աշակերտն է: Այս մասին տե՛ս ընթացիկ **Մաս-2**ի Դ. Գլուխը, էջ 84: